

**Տ. ԳԱԲՐԻԵԼ ԱՐԵՂԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(22 օգոստոսի 2004 թ.)

*«Առեք կերեք, այս է մարմին իմ,
որ յաղագս ձեր և բազմաց բաշխի՝ ի
բաւութիւն և ի թողութիւն մեղաց»:*

(Մտքի զարթոյն)

«Յանուն Տօր և Որդոյ և Տօրոյն Սրբոյ. ամէն»:

Միբելի բարեպաշտ ժողովուրդ,

Աղոթքի, հոգևոր խորունկ ապրումի պահ է համակել մեզ: Փառք և գոհություն ենք ընծա-
յում բարձրյալն Աստուծոյ, որ մեզ վերստին շնորհեց երջանիկ պարտաւորութիւնը՝ Ս. Պատարագ
մատուցելու Քրիստոսաւեջ սրբավայրում: Ուսումնառության մեկնած երկարապարս բացակա-
յութիւնից հետո վերադարձել ենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, և այս պահին մեր միա-
բան եղբայրների առաջ մեր ուխտն ենք վերահաստատում համայն հայության ուխտավայրում:

Մարդկության պարտաւորութիւնը ճշմարտության որոնումի ճանապարհ է, և այդ ճանա-
պարհն անցնելու համար՝ մարդը բազում դժվարութիւնների և փորձութիւնների է դիմագը-
րավում: Եթէ բնութեան առնենք անհարի կյանքը, կտեսնենք, որ ամեն մի անձ ձգտում է
բացարձակ ինքնութեան հաստատմանը, և ահա այդ ինքնութիւնը կերպով համար հոգևոր
խոսքը մարդու սրտին հասցնում է քրիստոնեական բարձր ճշմարտութիւններ, և այդ ճշ-
մարտութիւններն են, որ անհարի մեջ ցանում են բարոյական սերմեր, և եթէ պահես այդ
պարզամտները և կյանքի կոչես դրանք, ապա Ավետարանում պարտավոր Մերմնացանի ա-
ռակի նման պետք է սերմերն արձակի և պտղաբերի հավաքացյալ մարդկանց հոգիներում:

Ճշմարտեանը հասնելու համար նախ պետք է հավատալ, քանի որ հավատքը ամե-
նից առաջ Աստուծոյ նախախնամութեան խորունկ համոզումն ու վստահութիւնն է նրա հայ-
րական սիրուն, ինչպէս սահմանում է Պողոս առաքյալը: Հավատք, որ փոկուն ու անսասան
է պահում անհարի՛ն՝ քաջութեամբ ապրելու Քրիստոսապարգամ կյանքը՝ ճշմարտութեան
հողի վրա շաղախված, քանզի Աստուծոյ ձայնում է մարդկութեանը. «Ես եմ ճանա-
պարհը և ճշմարտութիւնը և կյանքը» (Մատթ. 11: 6): Ահա այս երեք բառերով Քրիստոս
մարդկութեանն ավերում է կյանքն իմաստութեամբ ապրելու խորհուրդը, իսկ Աստուծա-
շունչը գալիս է մեր հոգիներում կառուցելու ճշմարտութեան այն փառարը, որի մեջ բնակվում
է բարին, հաճելին և կարարալը:

Ի սկզբանէ Աստուծոյ մարդուն հաստ զարձրեց ճշմարտութեանը: Այդ ճշմարտութեան
ճաշակումը՝ Աստուծոյ պարտաւորութեան գործադրումն է, սակայն մարդն ուրացավ այդ ճշմար-
տութիւնը, և արդիւնքը՝ իսկական ճանապարհն էր, որ առաջնորդեց նրան իր անհնազան-
դութեան պարտաւորութեանը: Աստուծոյ ճշմարտութեան իր ուխտը հաստատեց մարդու հետ՝ ասե-

լով. «Պիպի սիրես քո Տեր Աստուծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով ու քո ամբողջ մարմով» (Մատթ. ԻԲ 37), և մեզանից էլ պահանջում է, որ մենք էլ մեր ուխտն ամրապնդենք Աստծու հետ՝ ճշմարտությանը հասու դառնալու համար: Աստված մեկ անգամ հաստատեց ճշմարտությունը և որպես արարչության Նայր մշտապես Իր հայրական կոչով դիմում է մարդկությանն՝ ասելով. «Եկայք առ իս ամենայն վաստակեալք եւ բեռնաւորք, եւ ես հանգուցից զձեզ» (Մատթ. ԺԱ 29):

Նահապետների, մարգարեների և ընտրյալ մարդկանց միջոցով Աստված մարդկությանը նախապարաստում է այդ ճշմարտությունն ամբողջությամբ ընդունելու և ապրելու: Նա որպես ողորմած և զթասիրտ իր ձեռքն է պարզում մարդկանց՝ առաջնորդելու այն ճանապարհով, որ մարդկությանը զարդարում է իմաստությամբ և ճշմարտությամբ: Իրեն հավատարացող մարդուն առաջադրեն բաշխում է աստվածային շնորհները՝ վկայելու արդարության և ճշմարտության մասին: Գոյություն, որ գալիս է մարդու մեջ սերմանելու աստվածայինը, կառուցելու արարչության փառաբան, որ մշտապես օգնում և զորացնում է մարդուն՝ ճանաչելու և ընդունելու խաղաղությունը, զարդարելու իր ապրած կյանքը Քրիստոսահաստատ շնորհներով:

Նին Կրակարանն ամբողջությամբ բացարձակ ճշմարտության նախապարաստումն է, քանզի Աստված այնքան է սիրում իր սրբեղծածը, որ ճշմարտության մարմնացումով է ցանկանում վերագրել կորածին և ընկածին: Քրիստոսի մարդեղացմամբ խաղաղությունն ու ճշմարտությունը բնակություն հաստատեցին մարդկանց հոգիներում, որովհետև ճշմարտության նկատմամբ ունեցած հավատով ու սիրով է, որ մարդ ժառանգելու է հավիտենական կյանքը և երջանկությունը: Գոյության հաստատումն էր՝ երկրի վրա Քրիստոսի մարդեղացումը, քանզի երկինքը հրեշտակների բերանով եղանակում էր. «Փառք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն...» (Ղուկ. Բ 14) երկնային ավերիսը: Ուրեմն ճշմարտության աղբյուրն իր հորդառաք ջրերով լվանում է մարդկանց հին մեղքը՝ խավարը, փոխարենը նրանց զարդարելով աստվածային լույսով՝ փայլով մարդկությանն իր պարզամտ ասելով. «Վերցրու խաչդ և արի իմ երկնից» (Մարկ. Ժ 21): Ներկաբար, կյանքի ճշմարտությունն աստվածային խաչն է, խաչի ճանապարհը, որ առաջնորդում է մարդուն ճշմարտի փառանգորդը դառնալու հավիտենական փրկության:

Աստվածորդին Իր կյանքով արդարություն և ճշմարտություն սերմանեց մարդկանց հոգիներում՝ սիրելու և այդ սիրով ապրելու քրիստոնեական ճշմարտի վարդապետությունը: Գոյությունը Աստծու պարզության կապարտումն է, երկնքի և երկրի Արարչի կամքի իրագործումն է, քանի որ Աստված Իր Միածին Որդու զոհաբերությամբ և մարմնի ճաշակումով մարդկությանն առաջնորդում է փեսանելու և ապրելու խոստացված հավիտենական փրկությունը, որ Քրիստոսի մարմնի ճաշակումն է, և որը մեզ փառում է խաչի ճանապարհով՝ լուսավորելու մեր հոգիները խաղաղությամբ և ճշմարտությամբ:

Մաղթանքս է, որ Աստված Իր ուժն ու զորությունը պարզի մեզ՝ ապրելու այն ճշմարտությունը, որ ուրախության և ցնծության գրավականն է:

Թող Աստված Իր սիրով և ճշմարտության լույսով զարդարի մեր հոգիները՝ լինելու բարի մշակներ, լինելու նվիրյալ սերմնացաններ, որպեսզի կարողանանք մեր կյանքով վկայել ճշմարտության մասին այժմ և հավիտյանս. ամեն: